

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կես տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mshak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւնը ընդունւում է ամէն ընդունով:

Հայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւոր ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԻՄԱՍԻՈՒԹԻՒՆ

Մամուլը և ցենզուրը.— ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Շուշուց. Նամակ Նոր-Բայազետից. Գեր-
բին լուրեր.— ԱՐՏԱՌԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իշխան
Բիսմարկի դիմադրական ուղղութիւնը. Կ. Պօլսի
առեւտրական կեանքից. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր.— ԻՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳՐԻ-
ՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԱՄՈՒԼ ԵՒ ՅԷՆՉՈՒՐԱ

Մեր ընթերցողներին յայտնի է արդէն,
որ Կ. Վ. Եսկիմով, հեռանալով կովկասեան
ցենզորական մասնաժողովի նախագահի
պաշտօնից, ընդունում է մի աւելի բարձր
պաշտօն, այն է կովկասեան կառավարա-
պետի խորհրդի անդամի պաշտօնը: Այդ
տեղի վրա Եսկիմովը, ինչպէս «Тифлис»-ում,
«Источек»-ում և այլ լրագրեր շատ ուղիղ է նկատում, որ
Կ. Վ. Եսկիմով, իր ուժով ամէնայն գործունեու-
թեան ընթացքում, որպէս գրաքննական
մասնաժողովի նախագահ, իմացաւ գրա-
ւել մեր մամուլի անդամի պաշտօնի հա-
մարձիւթիւնը իր անողմնապահութեամբ,
իր անկողով, իր ընդունակութեամբ ըմբռ-
նելու յօդուածներն բուն իմաստը, առանց
մանրակրկիտ կերպով բառերի և տառերի
ներքեւ ելնելու, վերջապէս իր ըն-
դունակութեամբ հասկանալու խմբագրու-
թիւն ցենզորների հետ երկու կողմերի մէջ
ծագած տարաձայնութիւնների ժամանակ:

Եւ իրաւ, ցենզորական մասնաժողովի
նախագահը պէտք է, որ Եսկիմովի պէս, մի
հմուտ, լուսավարական անձնակերպութիւն լի-
նի, որպէս զի տեղական մամուլը համապա-
տասխան իր կոչմանը: Քսան և հինգ
տարի շարունակ աշխատած լինելով մամու-
լի վրա և այլ օրգաններում և ինքնաբա-
տան և ուժով տարուց աւելի գրական և
քաղաքական թերթի հրատարակելով մեկը
միջոց ունեցանք մանրամասն, անկող-
ուսումնասիրելու ուսուց ցենզորական կա-
նաչափութիւնը: Այդ կանոնադրութիւնը,
մեր կարծիքով, տեղական մամուլին միջոց
է առիտ տեղական շահերի արժանաւոր
ներկայացուցիչ լինելու, սակայն երբ ցենզո-
րական մասնաժողովին տրվում են ժամա-
նակաւ հարկաւոր է ցենզորներին և
ցենզորական մասնաժողովի նախագահին
շատ հմուտ, անողմնապահ և լուսավոր-
ված լինել ըմբռնելու համար այդ հրա-
հանքների բուն իմաստը, առանց մեքենա-
յական կերպով հետեւելու հրահանգների
միմյան բառացի իմաստին, հարկաւոր է ի-
մանալ ցենզորական հիմնական կանոնադրու-
թեան իմաստը, ստացված ժամանակաւոր
հրահանգների իմաստը հետ ինքնայն կեր-
պով համաձայնեցնելու:

Բայց սրանից, թէև օրէնքը թոյլ է տա-
լիս խմբագրներին իրանց և զրարնութեան
մէջ տարաձայնութեան ծագած ժամանակ,
զանգաւակել Պետերբուրգ տպագրական զը-
նաւոր վարչութեանը, սակայն այդ իրաւուն-
քից խմբագրներին և ոչ մէկը երբեք չէ
օգտուել, քանի որ այդ տեսակի զանգաւակելի
հետեւեցը կատարելապէս անարդիւն է
լինում: Եւ ահա ինչ պատճառով Կիցուք
մի յօդուած ջնջվում է տեղական ցենզու-
րայի կարգադրութեամբ, խմբագրը զան-
գաւակել է Պետերբուրգ և Կիցուք մի ամ-
պի, նոյն իսկ մի երկու երեք շաբաթից յե-
տոյ տպագրական գլխաւոր վարչութիւնը
թոյլատրում է յօդուածի ապագրելը.— սա-
կայն ի՞նչ օգուտ. լրագրական յօդուածը,
որի նիւթը մեծ մասամբ շոշափում է մի
որ և է առօրեայ, ընթացիկ խնդիր, կորց-
նել է արդէն իր ժամանակակից նշանակու-
թիւնը, իր ընթացիկ հետաքրքրութիւնը:
Եւ խմբագրին այլ ևս չէ պարտւում թոյլ
տալ յօդուածը: Նոյն իսկ այդ պատճա-
ռով ահագին նշանակութիւն ունի մամու-
լով ահագին նշանակութիւն ունի մամու-

ժողովի նախագահի անձնակերպութիւնը, որ
ընդ երբեք չը շեղվելով օրէնքի ճշմարիտ
իմաստից, մի և նոյն ժամանակ լուսավոր-
ված, բաղադրականի կերպով զարգացած
անձն պէտք է լինի որպէս զի ըմբռնել կա-
րողանալով ներկայացրած յօդուածի բուն ի-
մաստը և նրա բարի նպատակը, իր նա-
խաձեռնութեամբ թոյլատրէ այնպիսի զը-
ւածք, որի տպագրելը պատասխանատու-
թիւնը յանձն առնելու երկրորդը չէ թոյ-
լատրում տեղական ցենզորները:

Այդպիսի մարդ էր Կ. Վ. Եսկիմով, որը չը
նայելով ստացվող բաղադրութեւ ժամանակա-
ւոր հրահանգներին, զիտէր, կարողութեան
չափ, համաձայնեցնել այդ ժամանակաւոր
իմաստը կցրանքների իմաստը, ցենզորական
հիմնական կանոնադրութեան հետ: Մենք
անում ենք կարողութեան չափ, որով-
հետեւ անհարկին ոչ որից պահանջել
չէ կարելի:

Տեղական ուսուց լրագիրն իր յօդուածի
վերջում տրջունում է ցենզորական մասնա-
ժողովի նոր նշանակված նախագահ Կ. Վ.
Եսկիմովին, յայտ յայտնելով որ և Կ. Վ. Եսկիմով
կը հետեւէ նախկին նախագահի անողմնա-
պահ ընթացքին:

Գ. Ա.

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՆՉՈՒՐ

Փետրվարի 24-ին

Ուսման, չը դիտենք ինչու, կամենում են ցոյց
տալ, որ մեր գիւղացին առհասարակ միամիտ է,
որ նա ոչինչ չէ հասկանում, որ նրան, օրինակ,
հրատարակած անունը անգամ սարսափեցնում է,
և այն: Բայց, քաղաքացիներ թէ ինչպէս երևոյ,
մի փաստ: Անցեալները գտնվելով տեղիս դատա-
րանում, տեսանք մի գիւղացու, որը մի խնդիր
էր տալիս դատարանին: Ինչպէս երևոյ, խնդիր-
քում գրված էր, որ խնդրատու գիւղացուն իր
համագիւղացիներից մէկը հայտնի է: Ինչը
չէ լսել հայտնաբեր, այլ իրան տուել են այդ մա-
սին: Ինչ էր կարծում, խնդրատու գիւղացին ի-
րան վերադարձած համարել է խնդիր տալին:

— Եւ գիւղացին այդ չէ հասկանում և չէ էլ կա-
րող հասկանալ: Նա խնդիր է տալիս միայն նրա
համար, որ ինչ է հայտնի լին փաստ է մի կերպով
թէ կողմ ինչը մի օր ճանապարհ է եկել խնդիր
տալու համար, թէ կողմ ինչը զրա համար ծախ-
սել է անում, թէ կողմ օրերով պէտք է գործից
ընկնի և դատարան գնայ: Նա այդ ամենը յանձն
է առնում, միայն թէ իրան հակառակորդ համա-
գիւղացուն փաստ է... Մեր պատմածը բացառու-
թիւն չէ, այլ մի սովորական երևոյթ: Տեսնում
էք, որքան բարոյական է մի գիւղացին...:

Երբ Շուշում օրը միտում է, փողոցներն էլ
միմի են մտնում: Ի՛հ, ինչ կարիք կայ կուսելու
ընտրութեան դէմ: միմում է, թող փողոցներն էլ
միմի մնան... Այնու ամենայնիւ փողոցներում
լապտերներ կան: Այդ լապտերները թէև վառ-
վում են, սակայն միայն իրանց տպակներին են
լոյս տալիս, իսկ փողոցներին բոլորովին, որով-
հետեւ թէ ճրագները փող-փող են և թէ ապա-
կները վերին աստիճանի կեղտոտ են, և այդ
տպակները երբեք չեն մաքրվում: Այդպէս
այժմ, այդպէս է եղել և առաջ: Բայց դրանից
լապտերներն էլ միմանցից շատ հեռու են: Իսկ
չուկայի փողոցներում մի լապտեր անգամ չը
կայ, այնպէս որ խանութների փակվելուց յետոյ,
(իսկ այստեղ խանութները շատ շուտ են փակ-
վում, մանաւանդ ձմեռը) համարեա թէ անհա-
րկն է լինում անցնել այդ փողոցներով: Այդ է
պատճառը, որ քաղաքները առանց իրանց հետ
լապտեր ունենալու, անկց զուրա չեն դա, որով-
հետեւ անհարկն է համարեա առանց լապտերի

ման գալը, մանաւանդ եթէ փողոցները ցեխոտ են,
իսկ Շուշու փողոցների ցեխերը սարսափելի են:
Այս ամենից յետոյ կը զարմանաք, եթէ անհրա-
դ թաղաքը այդ լապտերների համար տարեկան
մօտաւորապէս հազար բուրլի է մսխում: Գոնէ
այդպէս են եղել գրում զեպուտատները հայ-ի
տեսարկում... Մի վաղալու բան է: Կայսերա-
կան տոն օրերի երեկոներին քաղաքիս շուկայի
փողոցները լուսավորվում են: Գեպուտատները
զրա համար տեսարկում տարեկան երկու հարիւր
բուրլի ծախս են եղել գրում, մինչդեռ այս
ծախսը միշտ անում են շուկայի խանութատեր-
ք... Բայց սրանցից կը լինեն, ի հարկէ, և ու-
րիշ շատ զեղծումներ: Մենք այստեղ միտաւոր
ենք համարում և շուկայիցներին, որոնք, հարկէ
իրանց վերին աստիճանի անտարբերութեան, հա-
չիւ չեն պահանջում զեպուտատներից: Եւ, ինչ
բան ունենա, ասում է ամեն մի շուկայի և
լուսում... Ինչպէս անցեալները հաղորդված էր
«Մշակին», այս տարի զեպուտատ ընտրված է
Կ. Վ. Եսկիմովն, որը ուսուցիչ էր թեմական
դպրոցում: Իբրեւ խնդիր լինում մարդ պարտի վրա
պարտաւորութիւն կայ հրապարակ հանել այն
բոլոր վերոյիշեալ տեսակի զեղծումները, որ
նա միայն կարող է իմանալ և որոշեք գործել են
նախկին զեպուտատները: Այն ժամանակ մի
շուկայիցները կը տեսնեն, թէ ինչ տեսակ մարդ-
կանց հետ են գործ ունեցել և իրանք իրանց որ-
քան վնաս են տալիս, հարկէ իրանց սարսափելի
անտարբերութեան: Իսկ եթէ պարտեք այդ չի
անի, այն ժամանակ նա արժանի է նրանց հա-
մարտէ կոչվելու:

Անցեալները «Մշակում» մի թղթակցութիւն
էր տպված, որով յօդուածագիրը մեղադրում է
շուկայիցներին, որ նրանք չեն յաճախում հայոց
կաթնաղանձակ ընկերութեան տեղիս ծիւղի բա-
ցած գրադարան-ընթերցարանը, աւելի լաւ հա-
մարելով ամբողջ օրը կանգնել շուկայում, քան
թէ ընթերցարանում կարդալու: Արդարացի է
այդ մեղադրանքը, սակայն մեղադրելով ոչինչ չի
գործնալ: Եթէ հասարակութիւնը անտարբեր է
զեպի ընթերցարանի նման օգտաւէտ հիմնարկու-
թիւնը, պէտք է աշխատել, որ նա կամայ-կամայ
մօտենայ այդ հիմնարկութեան: Դրա համար
պէտք է, որքան կարելի է, գիւրտել իրան տալ հա-
սարակութեան ընթերցարանը յաճախելու: Դրա-
դարան-ընթերցարանի վճարը շատ է, մեր կարծի-
քով: Ընկերութիւնը կարող է ահա թէ ինչ անել.
գրադարանի վճարը շուկայ ընթերցարանի վճարից
այնպէս որ գրադարանից գէրք չը վերցնողը
միայն ընթերցարանի համար վճարէ, իսկ ընթեր-
ցարան չը յաճախողը վճարէ միայն գրադարանից
գէրք վերցնելու համար: Այժմեան վճարը այն
ժամանակ պէտք է կիսել և այնպէս անել, որ
գրադարանի և ընթերցարանի վճարները միմյան
աւելի չը լինեն այժմեան ընդհանուր վճարից:
Այդպիսով համ ընթերցարանը նիւթական վնաս
չի ունենայ, համ էլ գրադարան-ընթերցարանը
աւելի մատչելի կը դառնայ: Հասարակութիւնը,
մեր կարծիքով, այդ ժամանակ կամայ-կամայ կը
մօտենայ գրադարան-ընթերցարանին: Ուսմանի
մէջ ընթերցարանութիւնը անհամեմատ աւելի
է տարածված, քան թէ մեղանում, այնու ամե-
նայնիւ ուսմանի մէջ գրադարաններ կան, որ
մօտեք կամ ձրի է, կամ վճարը շատ չլինի է:
Մի կողմէ ասել, թէ մենք միջոց չունենք ձրի
գրադարանների բանալու, Դրան մենք կը պա-
տասխանենք, որ երբ ձրի գրադարան բանալու
միջոց չը կայ, պէտք է գոնէ, որքան կարելի է,
գիւրտել, տալ հասարակութեան օգտվելու
գրադարան-ընթերցարանից: Պէտք է հասարակու-
թեանը սովորեցնել ընթերցարանութեամբ պա-
րասելու, քանի որ հայերիս համար դեռ ևս
պահանջ չէ դարձել ընթերցարանութիւնը: Իսկ
եթէ մեր գրադարան-ընթերցարանը վճարի կող-
մից այժմեան դրութեան մէջ կը մնայ, այն ժա-
մանակ զեռ շատ տարիներ կը արանջան, թէ

հասարակութիւնը անտարբեր է դէպի ընթերցա-
րանը, թէ նա աւելի լաւ է համարում կանգնել
ամբողջ օրը շուկայում և տակից-գլխից դուրս
տալ, քան թէ ընթերցարան յաճախել:

Ուսման, հայցի խնդիր: ստիպմամբ, խոսել են
ձիւում մեր օրիորդաց ուսումնարանի հոգաբա-
ւոնների առաջ և կամենում են թող փել չառա-
րակութեան աչքերին, մի և նոյն ժամանակ
քարեր արձակելով թեմական գրադարանի հոգա-
բարձութեան վրա: Որովմէլ արարածներ...
Այդպիսիները այն աստիճան լրութեան են հաս-
նում, որ ասում են, թէ շուկայի կինը իր խօսակ-
ցութեան նիւթը ամբողջովին դարձրել է օրիոր-
դաց ուսումնարանի գրադարան խնդիրը: Նա
վայր է դրել իր անմիտ գաղափարները, իր
անտեղի խնդիրները, իր մախութն ու միտաբա-
լի սէր օրիորդաց ուսումնարանի և այլ այս
տեսակ նա զլ եր... Տեսնում էք, Գրադարանը
Երկրորդիս է դառնել: Այ, պարտնէր, ոչ: Շուկայի
կինը իր խօսակցութեան նիւթը բոլորովին չէ
դարձրել օրիորդաց ուսումնարանի գոյութեան
խնդիրը: Նա իր չաղ-չաղ բաղաձայնները չի
փոխի հաղար դարոցի գոյութեան խնդրի հետ:
Իսկ ինչ վերաբերում է այն խօսքերին, թէ շու-
կայի կինը վաղ է դրել իր անմիտ գաղափարնե-
րը, իր անտեղի խնդիրները, իր մախութն ու
միտաբալը ի սէր օրիորդաց ուսումնարանի, այդ
սուտ է:

Մեր թեմական դպրանոցի աշակերտները դի-
ցիպլինայի չեն ենթարկվում, նրանք անպատմելի
չարութիւններ են անում դասարանում և այդ-
պիսով խանգարում դաստաստութիւնը: Հարկաւոր
է առանձին ուշադրութիւն դարձնել դրա վրա, և
այն աշակերտներին, որոնք չեն կամենայ ոչ մի
գէպեւում դիցիպլինայի ենթարկվել, արձակել
դպրոցից: Մի մարդու բան է երբ մի աշակերտ
առանց ճաշի է թողնվում, իբրեւ պատիժ, դպրոցի
վերակացուն էլ պիտի մնայ անպակտիկ հետ
դպրոցում: Տիրացու վերակացուն էլ չը կամենա-
լով ինքն էլ առանց ճաշի մնալ, արձակում է
աշակերտին, որ ինքն էլ դիտաւ տուն և իր ժամա-
նակին փառաւոր վերադառնալ թիւֆթա ուտի...
Ո՛վ պէտք է ուշադրութիւն դարձնի:

Յայտնի է, որ անցեալ տարի Կուրի և Արաքսի
մէջտեղում գտնվող տարածութեան վրա մարեխ
երեւոյ և որ գիւղացիները անկարող լինելով բո-
լորովին փչացնել մորեխը թուաւ մեր կողմերը,
տեղ-տեղ զգալի միջանկիւ հասցնելով գիւղացի-
ներին: Այդ մարեխը ձու է դրել մեր կողմերում,
այդ պատճառով հրամայված է, որ գիւղացիներ-
ից ամէն մի ծուխ մի պուղ մորեխի ձու յանձնէ
կառավարութեանը, որ այդպիսով հնար լինի
գոնէ մասամբ փչացնել մորեխի ձուը: Այս ամառ
էլ գիւղացիները ստիպված կը լինեն կուսել մորե-
խի դէմ: Դրա համար գիւղացիներին անցալիւր
չեն տալիս ուրիշ քաղաքներ կամ տեղեր գնալու,
և պանդխտութեան մէջ եղող գիւղացիները պիտի
յետ կանչվեն իրանց գիւղերը: Ի դէպ. չըջալալ
գիւղերից մէկից, ուր մորեխը և կարկուտի իս-
պառ փչացրել են արտերը և այգիները և որը
ունի ընդամենը բաւական տուն ընակիչ, վաթ-
սուն հողի գտնվում են պանդխտութեան մէջ,
ամբողջ ձմեռը աշխատելու համար...:

Կովկասի Բարեգործական ընկերութեան տեղիս
ձիւղը սովորաբար ամէն տարի տպած համառու
հայի էր տալիս հասարակութեան: Սակայն վաղ-
ջութիւնը 1889 թվականի հայիւր միմիս այժմ
զեռ չէ տուել, թէև այդ հայիւր պէտք է տար
արանից մի տարի առաջ: Անցեալ տարիների
հայիւրներում անդադար կրկնում էին, թէ կամ-
նայով հասարակութեանը աւելի յայտնի կացու-
ցանելու ընկերութեան գոյութիւնը, կամենում
ենք այս անհի, այն անհի: Այդ է ձեր աշխատու-
թիւնը հասարակութեանը չայտնի կացուցանելու:
Ընկերութեան գոյութիւնը: Դեռ մի հասարակու-
թեանը հայիւր ուղեկցե՛ք ձեր գործունէութեան
մասին, յետոյ ազդարակեցե՛ք, ամենք աշխատելու

ենք հասարակութեանը աւելի յայտնի կացուցանելու ընկերութեան գոյութիւնը:

Քաղաքում տարածված են «ծաղիկ» և այլ վարակիչ հիւանդութիւններ, որոնք մանուկներից բազմաթիւ դռներ են տանում: Այստեղ ձմեռ չի անցնի, որ զանազան վարակիչ հիւանդութիւններ բազմաթիւ դռներ չունենան մանուկներից:

Յ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Մարտի 6-ին

Եղանակն այստեղ կատարեալ դարձանային է: Եթէ այսպէս շարունակվի, գոնէ մարտի վերջերին վար ու ցանքը սկսվի: Միայն տարերը դեռ ձիւնից չեն ազատվել, որովհետեւ քամիներ չեն լինում, և այդ պատճառով անասունները դաբրը (БОРЬ) թանգանում է: մօտակա գիւղերից սահնակներով, ջրվանքների մէջ լցրած յարդ (գարման) են բերում վաճառելու: Խոտի սայլը և դարմանի չափանք ծախվում է 5—6 թուրք, այն ինչ աշնանը 2—3 թուրքի տրէի:

Ամսիս 2-ին տեղիս հայոց ուսումնարանի թատրոնական դահլիճում, ուսումնարանի օգտին ուսուցչական խումբը, սերողների մասնակցութեամբ, ներկայացրեց «Ռուզան» պիէսան: Խաղը ընդհանրապէս լաւ անցաւ, որպէս զերասաններից մի երկուսը լաւ չէին պատրաստել իրանց դերերը և բեմի փոքրութիւնը մեծ արգելք էր պատճառում զերասաններին կանոնաւոր չարժեքունի Ռուզանի դերը, որը շատ լաւ կատարեց տեղիս վարժուէի օրիորդ Վ. Թաղվէրանեանց, մեծ ապաւորութիւն և արդիւնութիւն թողեց հանդիսականներին վրա: Լաւ խաղացին նոյնպէս օր. օր. Վ. Տէր-Մարտիրոսեանց և Աննա Մամիկոնեանց նախնիների դերերը: Թատրոնը բռնել էր հասարակ դաստիարակչական, իսկ վաճառականների մեծ մասը փայլում էր իր բացառիկութեամբ: Մուտք, ասում են, շատ քիչ է եղել:

Տեղացի պ. պ. Նաւասարդ Արշաւանեանց և Սարիբէք Կարապետեանց իրանց հանգուցեալ հայրերի յաշատակին նուիրեցին հայոց երկսեռ ուսումնարանի օգտին իւրաքանչիւրը յիսունական թուրքի: Յանկալի է, որ ուրիշներն ևս հետեւին այդ քարի օրինակին, որով մեծելանայի անմիտ սովորութիւնը նվազեցնուցի: Եւ վերջապէս և ուսումնարանը կ'սկսեցին օժանդակելով, աղքատ մանուկներից շատերը կը կշտանան մտաւոր հասցով:

Կենսական միջոցները հետեւեալ գինն ունեն մեզանում: Թխած հացի ֆունտը 1-ին տեսակի՝ 3 կօպէկ, 2-րդ տեսակի՝ 2 կօպէկ, տաւարի մսի ֆունտը՝ 5 կօպէկ, ոչխարի՝ 6 կօպէկ, հաւած իւղ՝ 28—30 կօպէկ, 10 հատ ձու՝ 6 կօպէկ: Աւելի լիարը (12 ֆունտ) ծախվում է դափանի տակ 24—26 կօպէկ:

Ս. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

«Հիւսիսային դործակալութիւնը» հեռագրում է Պետերբուրգից, որ սենսատօր իկսկու ֆօն-Ղիլընքանտ նշանակված է աւետարանական-լուծիքական ընդհանուր կօմիտօրիայի նախագահ:

Ռուսաստանի գէոմոլօգների բժիշկների առաջիկայ համագումար ժողովում կը զննվի դպրոցների առողջական դրութեան վրա գէոմոլօգի բժիշկների կողմից վերահսկողութիւն հաստատելու հարցը:

ԲՈՍՏՈՎ քաղաքից հեռագրում են, որ Գօն դետր ստուգելից աղատվելով՝ բացվեց նաւազնացութեան համար:

ԵՐԵՒԱՆԻՑ մեղ գրում են, «Կովկասի սովորութիւն է մտել այժմ Երեւանի հայ հասարակութեան մէջ, մի սովորութիւն, որը արժանի է բոլոր հայերին օրինակ լինելու. փոխանակ մեռեալացի, հանգուցեալների ժառանգները սկսել են այժմ գումարներ նուիրել բարեգործական նպատակով: Անցեալները Ալլինեանց կողայրների հայրը վախճանվելով ժառանգները իրանց հօր յիշատակին նուիրեցին 200 թուրքի թեմական դպրոցին և Կայանեան օրիորդաց ուսումնարանին»:

Մեղ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ կզանակն այդ տեղ սկսում է տաքանալ, թէ և չիլակայ սարերը ծածկող ձիւնը դեռ ևս չէ հալվել:

Ստացանք Լէօի «Կաւիթ և Մհեր» ժողովրդական վէպի ընտանադատութիւնը: Գրեցիւ արտատպված է Մօսկվայում հրատարակվող «Գրականական և պատմական» հանդէսից, ներկայ 1891 թւին և արժէ 15 կօպէկ:

Կիրակի օր պիտի լինէր յայտնի պիւնիստ Բէյլըն առէրի առաջին կօնցերտը Թիֆլիսի քաղաքային թատրոնում: Բայց չողենաւ ուշանալով Սե ծովի վրա, պ. Բէյլընաւոր հաղիւ կարողացաւ Թիֆլիս հասնել կիրակի երեկոյան: Այդ պատճառով նրա առաջին կօնցերտը կայացաւ միայն երէկ, երկուշաբթի օր: Այսօր, երեքշաբթի, մարտի 12-ին, լինելու է պ. Բէյլընաւոր երկրորդ կօնցերտը, նոյն թատրոնում:

ԲԱՌՈՒՄԻՑ մեղ գրում են, «Անցեալ շաբաթ ծովի վրա սաստիկ մառախուղ կար. նաւահան զատի մօտ մի քանի չողենաւոր ամբողջ օր կանգ էին առել և չէին կարողանում ավելի մօտենալ: Այդ մառախուղը բաւական վնասներ է տուել նաև ծովի վրա, Սինօպի մօտ խորասուզվել է անգլիական «Atrato» չողենաւոր, 99,000 մնդուկ կերօնի բնուով (մօտ 225,000 պտղ): Այդ աշ չողենաւոր է, որի մօտին գրել էի, և որի ծառայողները ևս հնդկներ են»:

ԻԳԻԻԻՑ մեղ գրում են, «Այսօր են գարնանային տաք օրերը. ձիւնը բոլորովին հալվել է արդէն: Մի քանի օրից յետոյ կը սկսվեն դաշտային աշխատանքները»:

Մեղ գրում են Իգլիբից և հետեւեալ. «Այս օրերս այստեղ մի գողութիւն է պատահել. անշայտ գողը տարել են եկեղեցուց մօտ 150 թուրքի բահաններին պատկանող գումարը: Զարմանալի է միայն, որ ոչ եկեղեցու դուռն է կտրված, ոչ էլ փողի արկղը»:

Մենք տեղեկացանք, որ այս օրերս Թիֆլիսի «Աւետարան» կօչվող կըլըր փակվեց և կըլըր բոլոր կահ-կարասիները ծախվեցան աճուրդով:

Վրաց «Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ մտադրութիւն կայ Թիֆլիսի դատաստանական պալատի և նահանգական դատարանի համար նոր շինութիւն կառուցանել, զանաքանի հաշուով: Արդարադատութեան միջնորդութիւնը վճռել է այդ շինութեան համար 200,000 թուրքի յառկացնել:

Տեղական լրագիրները լսել են, որ Թիֆլիսի դատաստանական պալատի պրօկուրօրի օգնական խոջօփելի, զժգոհ մնալով դատաստանական պալատի վճռից Անտօն Կորգանովի գործի վերաբերմամբ, նորից վճռալինջ դանդաղ է տալիս սենատին: Ուրիշ կողմից և Սօֆիա Տէր-Մկրտչեանի պաշտպան, պ. Օպօչին, գանգատ է տալիս սենատին:

«Իվերիա» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի ոստիկանապետը հրամանագրել է ոստիկանութեան ծառայողներին այսուհետև արգելել վերսկսելով փողոցների արտօտարները վրա և առհասարակ այնպիսի տեղերում շրջելը, ուր մեծ բազմութեամբ գտնուում է հասարակութիւնը:

Կիրակի, մարտի 10-ին, երկու ամսվայ ընդմիջուցից յետոյ վերջապէս հրատարակվեց «Արձագանք» շաբաթաթերթը: Համարի նիւթն աննշան է, իսկ պատկերները՝ անաշուղ:

Տաք դարձանային եղանակները սկսվել են արդէն Թիֆլիսում: Եւ մեր քաղաքի բնակիչները այլ ևս ոչ մի տեղ չունեն գտնուելու և չունչ քաշելու համար: Քաղաքի կենտրոնում իշխան Բարիտախնաւու շինած Ալեքսանդրեան այգին կիսով չափ ոչնչացրած է, իսկ Մուշաթիւք հրաշալի այգին, իր դարեր ծառերով՝ կատարեալապէս ոչնչացրած է: Հարկւր հազար բնակիչ ունեցող քաղաքի ժողովուրդը մոլորված է միացել և փորել ինչ չունչ քաշելու համար նրան ուրիշ ոչինչ չէ մնում, եթէ ոչ անց Դաբաձ անիլ թողոտ փողոցներում:

Փետրվարի 8-ին Պետերբուրգի համալսարանը տօնեց իր գոյութեան 73-ամեակը: Ժողովրդին մեծ բազմութեամբ չը խոնջվելու համար, վճռվեց ներս թողնել դահլիճը տօնակներով: Ժամի

1-ին սկսվելով հանդէսը՝ պրօֆէսօր Գլազնեալ կարգաւ տարեկան հաշիւը ըստ սովորականին. այդ հաշիւից, ի միջի այլոց, երևում է, որ 1890 թւականին ուսանողների թիւը հասնում էր 1759-ի, իսկ աղատ ունիւղիւնները՝ 36: Հաշիւից յետոյ՝ պրօֆէսօր Պօդգէնկով կարգաւ պրօֆէսօր Յազարկիլի գրած ճառը: Այդ ճառը մի քանի կողմից հետաքրքրի է: Նրանից խնամում ենք, որ ներկայ թւականին լրացել է ուղիղ 50 տարին այն օրից՝ երբ առաջին անգամ բացվեց վրաց լեզուի և գրականութեան ամբիօնը Պետերբուրգի համալսարանում և 400 տարին այն օրից, երբ Վրաստանը ուղարկեց Մօսկվա իր առաջին պատգամաւորութիւնը: Այդ հանգամանքի առիթով ճառը նուիրված էր Ռուսաստանի թէ կովկասի հետ ընդհանրապէս և թէ Վրաստանի հետ մասնաւորապէս յարաբերութիւնների բնաւորչմանը 16, 17 և 18 դարերի ընթացքում: Հաւաստւոր մանրամասն ըննեց քաղաքական, կրօնական և մատենագրական յարաբերութիւնները այդ ժամանակվայ այդ երկու երկրների մէջ: Հաւել յետոյ մի առ. մի յիշատակեցան այն ուսանողներին անունները, որոնք արժանացել էին պարգևներ իրանց հնդկականութիւնների համար:

Այս օրերս վրաց գրականութիւնը և հասարակութիւնը ունեցան մի մեծ կորուստ: Վլադիկապետով վախճանվեց Միքայէլ Ղիփիանի, որը վրաց մամուլի հաղորդած տեղեկութիւններին նայելով, վրաց նոր գրականութեան գրեթէ հիմնադիրն էր ներկայանում: Ամբողջ երեսուն տարեկան ընթացքում նա անդադար աշխատում էր վրաց գրականութիւնը զարգացնելու և ծաղկեցնելու, և բացի դրանից, նա գործում և մեծ դեր էր կատարում վրաց ուսումնարանական շրջանում: Գնո 1862 թւին հանգուցեալը առաջինն եղաւ, որը հրատարակեց վրացերէն անդրանիկ թւարանութիւնը: 1863 թւին «Սաքարթվելօ Մօմբէ» ամսագրում իր թարգմանութեամբ տպագրեց Լէրմոնովի «Մեր ժամանակի հերոսը» կամէդիան: 1864 թւին վրաց գրականութիւնը ծաղկեցնելու նպատակով Վիեննայից բերել տուեց վրաց նոր ձևի տետրեր, որոնցով մինչև այժմ տպագրվում են վրաց հրատարակութիւնները: 1865 թւին տպագրեց վրաց «Յիսկարի» ամսագրում Շէքսպիրի «Իւլիոս Յէզար» ողբերգութեան թարգմանութիւնը: 1870 թւին տպագրեց վրացերէն լեզուով մաթեմատիկայի դասագիրք: 1886 թւին տպագրեց ընդարձակ թւարանութիւն, իսկ 1887 թւին երկրաչափութիւն: 1886 թւից սկսեց «Իվերիա» լրագրում տպագրել իր ընդարձակ գրութեան «Իմ նամակները թաղեալին» վերնագրով: Այդ գրութեան իր հետաքրքրի բովանդակութեամբ մեծ ուրախութեամբ էր կարդացվում Հանգուցեալը երկու տարեկան ծառայել է և վրաց դանազան դպրոցներում: Նա ոչ թէ միայն վրաց գրական և ուսումնարանական ասպարէզում էր գործում, այլ նաև աշխատում էր վաճառականութիւնն էլ զարգացնել և բաւական խնայող նախաքննի էր յօրինել առեւտրական ընկերութիւններ կազմելու նպատակով: Նա իր անկողնապաշտ բնաւորութեամբ, իր բարի և օրինակելի բարդ ու վաղբով սիրելի էր անխտիր տեղական բոլոր աղքատ ներկայացուցիչներին: Նա աշխատում էր միշտ անխտիր կերպով ամենի համար գործել այն, ինչ որ լաւ է և բարի: Գնո մահից քիչ առաջ հանգուցեալը աշխատում էր Ստեփան-Նովիկովայում դպրոց բանալ, բայց այդ ցանկութիւնը չաղողվեց: Հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսը մեծ չքով կատարվեց Վլադիկապետում ամսիս 4-ին: Ինչպէս գրում են «Իվերիա» լրագիրն, ամբողջ քաղաքը ոտի էր կանգնած: Բոլոր խնամութիւնը փակված էին: Ներկայ էին եպիսկոպոսը, բոլոր քահանաները, համբարները իրանց դրօշակներով և խուռն բազմութիւն: Գաղաղի վրա դրվեցան 15 պատկերներ: Կար մի պատկ և Վլադիկապետի հայերից հետեւալ վերադարձեալը. «Человекъ-любявому, отъ Владикавказскихъ Армянъ». Արտասանվեցան ճառեր և ոտանաւորներ՝ վրացերէն, ուսերէն և օսերէն լեզուներով:

Չարմանալի յամառութեամբ Ներսիսեան գաղղանցի հոգաբարձութիւնը չէ պատասխանում այն հարցին, որ մենք արեւ էինք նրան դպրոցի գումարների տույնների գործադրութեան վերաբերմամբ: Գա աններելի վարմունք է մի հիմնարկութեան կողմից, որ պահվում է հասարակութեան օժանդակութեամբ և այժմ էլ նորից պէտք է

դիմի նրան նոր շինութիւնը կառուցանելու համար:

Թիֆլիսի քաղաքային մօսնիցի պալատ և արքայազն է այն հարցով, թէ ով պէտք է լինի քաղաքապետ, և միանգամայն մոռացել է, որ քաղաքացիները թողից խեղդվում են: Կերպի օր, մարտի 10-ին, մի փոքր մաքուր օդ ծնւո համար, հաղարաւոր մարդիկ դիմում էին Մուշաթիւք, բայց Միքայէլեան փողոցում այնպիսի սարսափելի թող էր, որ ամենքն էլ անիւնում էին... Եւ միթէ քաղաքապետի ընտրութիւնը լիքաւ արգելում է ջրել տալ այն փողոցը, որով հաղարաւոր մարդիկ են երթեկեւում:

Կիրակի օր, մարտի 10-ին, Թիֆլիսի Գիւղարձի եկեղեցում տեղի ունեցաւ վրաց հասարակութեան լաւ յայտնի Միքայէլ Ղիփիանիի թաղումը: Ներկայ էր մեծ բազմութիւն: Գաղաղի վրա շատ պատկերներ դրվեցան:

Պետերբուրգից մեղ հաղորդում են. «Էյմլաժ» նապատական կառուածների նշանաւոր խնդիրը, որ վաղուց յարուցված էր, այժմ, ինչպէս լինացումը, արդէն վճռված է: Շուտով կը հաղորդենք մանրամասնութիւնները»:

Մեղ աղաքիւմ է մի փոքրիկ դպրոց, «Կարս կական դրոյցներ» վերնագրով: Գրեցիլի մէջ տեղի ունեցած են պարսկ կեանքից վերցրած մի քանի դրոյցներ, աշխատութիւն Վ. Փափաղեանի: Գըրքային արժէ 5 կօպէկ:

Երէկ կայացաւ Թիֆլիսի կառուածական բանկի թատրոնում օպերետային երգչուհի տիկին Ժիւլիի առաջին ներկայացումը: Երկրորդ ներկայացումը լինելու է այսօր, երեքշաբթի օր: Այդ ներկայացումների մասին կը խօսենք «Մշակի» հետեւալ համարում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱԿԻ ԴԻՍԱԿԱԿԱՆ ՈՒՎԱՌՈՒԹԻՆԸ

Իշխան Բիսմարկի օրգան, «Hamburger Nachrichten» լրագիրը չարուհակում է իր յարձակմանը ներք Վիլհելմ II կայսրի կառավարութեան դէմ: Բիսմարկ իշխանը հանդէս է գալիս, որպէս Գերմանիայի նախագահ տարաբաղումների ներք մարդաբան, նա սարսափով մտածում է Գերմանիայի անմիջ թաւ ապագայի մասին: Նա տարտու է զգում ամեն անգամ, երբ կարծիքի մի օր և է ճառ է արտասանում, կամ երբ կայսրը մի օր և է նոր կարգադրութիւն է անում, այս կամ այն վերանորոգութեան անհրաժեշտութեան վրա է խօսում: Նախկին պետական կանցլէրն ամեն բանում տեսնում է Գերմանիայի պետական կազմակերպութեան քայքայման նշանները, գերմանական քաղաքային ինքնակառավարութեան նոր ծրագիրը վերին աստիճանի անհանգստացնում է նրան, նա այդ վերանորոգութեան մէջ տեսնում է մի վերջնական հարուած, որը ուղղված է պարտական պահպանողական ոգու դէմ: Աւելի թաւ գաւաւ րակաւ քան թէ ինքը թաւաւորը, նա յորդրում է պահպանողականներին իրանց ամբողջ ոյժով զինադրել Վիլհելմ կայսրի վերանորոգիչ ձգտումներին: Կաթիլիկ եկեղեցու կառավարութեան կողմից արած զիջումները նրան վրդովեցնում են այն աստիճան, որ այժմ վստահութեամբ կարելի է ասել թէ նա է եղել կաթիլիկների դէմ՝ մղված «Kulturkampf» հռչակաւոր կուլի իսկական յարուցանողն ու նախաձեռնողը: Կայսրի սօցիալական քաղաքականութիւնն իշխան Բիսմարկի աչքում ուրիշ բան չէ, եթէ ոչ մի վտանգաւոր քաղաքական խաղ, որը թէ գերմանական մասնական արդիւնադրութեանը և թէ պետութեան զոյւթեանը հաւատարակ վստահ է բուպաւում: Երեւակեան դաշնակցութիւնը իշխանի աչքում այլ ևս առաջվայ նշանակութիւնը չունի, մանաւանդ որ այժմ ինքն այլ ևս չէ զինվարում պարտքի քաղաքականութեան փոփոխութեանը գործերը: Վերջապէս և Գերմանիայի զաղթական քաղաքականութիւնը, անվստահ դարձած և անորոշ դրեք բռնած լինելով Բիսմարկի կարծիքով կոտրում է Գերմանիայի անուան ու նշանաւոր կերպով վնասում է պետութեան արժանաւորութեանը:

